ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 235-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, քննության առնելով «Սուրեն Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Սուրեն Գրիգորյանը 2018 թվականի հունիսի 28-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 72-րդ, 78-81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի «Ապօրինի կերպով կրելը» դրույթը:

կամ

Բացահայտել՝ նույն դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը (սահմանելով՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման հնարավորություն)»:

2. Դիմողը նշում է, որ վիճարկվող հոդվածի դիսպոզի ցիան և դրանում օգտագործվող «ապօրինի» բառը ենթադրում են, որ հանցանքը կատարելու համար պարտադիր է այդ գործողություններն օրենքով կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված պայմանների խախտմամբ /այն է՝ ապօրինի/ կատարելը: Այլ կերպ

ասած՝ քննարկվող դեպքում օրենսդիրը քրեական պատասխանատվություն է սահմանել ոչ թե սառը զենք կրելու համար, այլ այն ապօրինի կրելու համար:

Ըստ դիմողի՝ իրեն առաջադրված, իսկ հետո նաև դատապարտման հիմքում դրված մեղադրանքում բացակայել է այն նորմատիվ իրավական ակտի վկայակոչումը, որը ենթադրաբար կարող էր խախտված լինել և առաջացնել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

Դիմողը գտնում է, որ նախատեսված չէ սառը զենք կրելու թույլտվություն ստանալու օրինական ընթացակարգ, որը խախտելու դեպքում կարող է առաջանալ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթով նախատեսված հանցակազմը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթը բլանկետային է, և առկա է օրենսդրական բաց, քանի որ որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ՝ դրանով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման, այն է՝ սառը զենք կրելու կարգը, որը չպահպանելը (խախտելը) կարող է հանգեցնել այդպիսիք ապօրինի կերպով կատարելուն:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով նորմում օգտագործված «ապօրինի» եզրույթը չի բխում տվյալ ոլորտը կարգավորող «Զենքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումներից՝ չապահովելով մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողը վկայակոչում է օրենսդրական բացի խնդիր՝ հիմնավորումներ ներկայացնելով առ այն, որ՝ «... վիճարկվող դրույթը բլանկետային է, և առկա է օրենսդրական բաց, քանի որ որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ դրանով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրակա-

նացման, այն է՝ սառը զենք կրելու կարգը, որը չպահպանելը (խախտելը) կարող է հանգեցնել այդպիսիք ապօրինի կերպով կատարելուն...»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում Սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ դիմողը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 22-ի դատավճռով ճանաչվել է մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված հանցանքում և դատապարտվել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով: Նշված դատավճռում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ «…«Զենքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«Քաղաքացիական է համարվում այն զենքը, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ինքնապաշտպանության, ինչպես նաև որսորդությամբ և սպորտով զբաղվելու համար:

… Քաղաքացիական զենքը ստորաբաժանվում է. (...)

3. Որսորդական զենքի՝

(…)

ե) սառը շեղբավոր զենք:

(…)»:

… «Զենքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված է ՀՀ քաղաքացիների՝ զենք ձեռք բերելու իրավունքը, որի համաձայն՝

«(…) Որսորդական շեղբավոր սառը զենք ձեռք բերելու իրավունք ունի որսորդական հրազեն պահելու և կրելու թույլտվություն ստացած քաղաքացին: Ձեռք բերված որսորդական շեղբավոր սառը զենքը վաճառող կազմակերպությունն անմիջապես գրանցում է քաղաքացու՝ որսորդությամբ զբաղվելու իրավունքը հաստատող փաստաթղթում: (…)»:

«Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 1999թ. հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշման 1-ին կետի ա) ենթակետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառության» կանոնների 59-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝

«59. Ոստիկանության մարմինների կողմից տրված լիցենզիայի կամ զենքի որոշակի տեսակներ ու մոդելներ կրելու և պահելու թույլտվության հիման վրա զենք կրելը թույլատրվում է՝ (…)

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ որսի, սպորտային միջոցառումների, մարզական և ուսուցողական հրաձգության ժամանակ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում»:

«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում որսի իրավունք ունեն՝

1) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր սույն օրենքով սահմանված կարգով հանձնել են որսորդական մինիմում և օրենքով սահմանված կարգով ստացել են սույն օրենքի 19-րդ հոդվածում նշված՝ որս կատարելու անհրաժեշտ փաստաթղթեր. (…)»:

Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝

«Որս կատարելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1) որսորդական զենք կրելու վկայականը.

2) կենդանիների որսի թույլտվությունը.

3) որսորդական վկայականը:»:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծության արդյունքում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ սառը զենք հանդիսացող որսորդական դանակն անձը որսի նպատակով կարող է կրել միայն այն դեպքում, եթե նա ունի որսորդական հրազեն պահելու և կրելու թույլտվություն:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, վերահաստատելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մայիսի 22-ի դատավճռում շարադրված դիրքորոշումները, 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ դիմողի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 22-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Սուրեն Աշոտի Գրիգորյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով՝ թողել է օրինական ուժի մեջ:

Խնդրո առարկա քրեական գործով դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև «Զենքի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 1999թ. հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշման 1-ին կետի ա) ենթակետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառության» կանոններով, «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավակարգավորումները վկայում են,

որ օրենսդրական առկա կանոնակարգումները սահմանում են որսորդական սառը շեղբավոր զենք կրելու կարգը:

Հետևաբար, խնդրո առարկա գործի շրջանակներում առկա չեն Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-914 որոշման մեջ ամրագրված երեք պայմաններից որևէ մեկը, այն է՝

- օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ,
- օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա,
- առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը, որի առկայությամբ հնարավոր կլիներ դիմողի կողմից վկայակոչված օրենսդրական բացը քննության առարկա դարձնել Սահմանադրական դատարանում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169–րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Սուրեն Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննության ընդունումը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

23 հուլիսի 2018 թվականի
ՍԴԱՈ-54